

Երևանի քաղաքապետ
պարոն Հրաչյա Մարգարյանին

Երևան քաղաքի ավագանու
խմբակցությունների ղեկավարներին՝

«Իմ քայլը» խմբակցության ղեկավար Ա. Գալջանին

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Մ. Մանրիկյանին

«Լույս» խմբակցության ղեկավար Դ. Խաժակյանին

Հարգելի պարոն քաղաքապետ

Երևան քաղաքի Ավագանու խմբակցությունների հարգելի ղեկավարներ

Ինչպես գիտեք, համայնքային ծառայությունը, պետական ծառայության հետ մեկտեղ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված է որպես հանրային ծառայություն:

«Հանրային ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայողների համար, բացի հիմնական սոցիալական երաշխիքներից (անվտանգ, առողջության համար անվնաս և անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, վարձատրություն և այլ վճարներ, ամենամյա վճարովի արձակուրդ, պարտադիր պետական սոցիալական ապահովագրություն և այլն) կարող են սահմանվել նաև լրացուցիչ այլ սոցիալական երաշխիքներ:

Այդպիսի լրացուցիչ երաշխիք սահմանված է քաղաքացիական ծառայողների համար: Մասնավորապես՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական արձակուրդային վճարից բացի, պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ իր միջին ամսական աշխատավարձի չափով: Աշխատանքից ազատվելու դեպքում միանվագ արձակուրդային վճարը տրվում է փաստացի աշխատած ամիսներին համամասնորեն:

Հաշվի առնելով արհմիության ուղղված աշխատողների դիմումները և ղեկավարվելով «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ով՝ առաջարկում ենք Երևան քաղաքի բյուջեի քննարկման ժամանակ դիտարկել Երևանի քաղաքապետարանի աշխատողներին միանվագ արձակուրդային վճարի տրամադրումը: Կարծում ենք, որ դրանով կվերանա Երևանի քաղաքապետարանի և պետական կառավարման մարմիններում աշխատող հանրային ծառայողների միջև խտրականությունը՝ առնվազն սոցիալական երաշխիքների մասով:

Միաժամանակ, առաջարկում ենք դիտարկել նաև աշխատողներին հանգստի սոցիալական փաթեթով ապահովելու հնարավորությունը, ինչպես որ դա արվում է

պետական աշխատողների համար, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների, ուսուցիչների, մշակույթի աշխատողների և այլն:

Բարձրացրած հարցերը կարող են քննարկվել նաև կոլեկտիվ բանակցությունների շրջանակում՝ համաձայն *Աշխատանքային օրենսգրքի* 2-րդ բաժնի:

Խնդրում ենք սույն գրությունը դիտարկել նաև որպես կոլեկտիվ բանակցություններ սկսելու առաջարկ:

Հարգանքով՝

Երևանի քաղաքապետարանի
աշխատողների արհեստակցական
կազմակերպության նախագահ

Լուսինե Սարգսյան

Շենգավիթ ՎՇ ղեկավարի
աշխատակազմի
արհեստակցական կազմակերպության
նախագահ

Մարինե Մկրտչյան

Մալաթիա-Սեբաստիա ՎՇ
ղեկավարի աշխատակազմի
արհեստակցական
կազմակերպության նախագահ

Արսեն Այվազյան

Էրեբունի ՎՇ ղեկավարի աշխատակազմի
արհեստակցական
կազմակերպության նախագահ

Եղիաապետ Անդրիասյան

Արաբկիր ՎՇ ղեկավարի աշխատակազմի
արհեստակցական կազմակերպության
նախագահ

Հովհաննես Սառիկյան

Դավթաշեն ՎՇ ղեկավարի աշխատակազմի
արհեստակցական կազմակերպության
նախագահ



Մարինե Խաչիկյան

25-10-2022, ք Երևան